| [1] Դուրս գրման ամսաթիվ | | | Հարկային հաշիվ (ծառայությունների մատուցման, աշխատանքների կատարման) | [2] Սերիա | [3] Համար |
|---|---|---|---|---|---|
| 24 | Դեկտեմբեր | 2018 թ. | | Ա | 3139663172 |
| [4] Մատակարարման ամսաթիվ | | | | Ճշգրտվող հաշվի | |
| 24 | Դեկտեմբեր | 2018 թ. | | Սերիա | Համար |
| | | | | | |
| | | | | Ճշգրտվող հաշվի դուրս գրման ամսաթիվ | |
| | | | | | |

| Պայմանագիր | [5] Կնքման ամսաթիվ | [6] Համար |
|---|---|---|
| | | |

[7] Լրացուցիչ տվյալներ (պայմաններ)

[7.1] ՀԴՄ կտրոնի համար

**Ծառայություններ մատուցող (աշխատանքներ կատարող) անձի**

| | | |
|---|---|---|
| [8] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ) | 0 2 5 2 7 6 2 4 | |
| [9] Անվանումը | «ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ Հիմնադրամ | |
| [10] Ավելացված արժեքի հարկ վճարողի հաշվառման համարը | 0 2 5 2 7 6 2 4 / 1 | |
| [11] Բանկային տվյալները | Արարարատ բանկ | N 1510002308480100 |
| [12] Գտնվելու վայրը (հասցեն) | ԵՐԵՎԱՆ ԿԵՆՏՐՈՆ ԿԵՆՏՐՈՆ ԹԱՂԱՄԱՍ ՏԻԳՐԱՆ ՄԵԾԻ 17 | |
| [13] Լրացուցիչ տվյալներ | | |

**Ծառայություններ (աշխատանքներ) ստացող անձի**

| | | |
|---|---|---|
| [14] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ) (ֆիզիկական անձի անձնագրի սերիան և համարը) | 0 2 6 3 1 2 6 3 | |
| [15] Ավելացված արժեքի հարկ վճարողի հաշվառման համարը | | |
| [16] Անվանումը | «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏ» Պետական կառավարչական հիմնարկ | |
| [17] Բանկային տվյալները | ՀՀՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն | N 900011000834 |
| [18] Գտնվելու վայրը (հասցեն) | ԵՐԵՎԱՆ ԱՐԱԲԿԻՐ ԱՐԱԲԿԻՐ ԹԱՂԱՄԱՍ ՄԱՄԻԿՈՆՅԱՆՑ Փ. 46/5 | |
| [19] Լրացուցիչ տվյալներ | Կամո Վարդանյան | |
| [20] Ում միջոցով | Անուն, ազգանուն | |
| | Լիազորագիր: Համար | |
| | Լիազորագիր: Ամսաթիվ | |

[21] Ծառայությունների մատուցման (աշխատանքների կատարման) ծավալի և վճարման ենթակա գումարի հաշվարկը

| N | Ծառայությունների (աշխատանքների) անվանումը (բովանդակությունը) | Չափման միավորը | Ընդհանուր ծավալը (ժամանակաշրջանը) | Միավորի գինը | Զեղչ(%) | Արժեքը | ԱԱՀ դրույքաչափը (%) | ԱԱՀ գումար | Ընդամենը |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 |
| 1 | դատահոգեբանական փորձաքննություն (գործ 16105018) | հատ | 1 | 32833.33 | | 32833.33 | 20 | 6566.67 | 39400 |
| Ընդամենը | | | | | | 32833.33 | | 6566.67 | 39400 |

Դուրս գրող՝ HARUTYUNYAN SUSANNA 7314730458

անունը, ազգանունը

Ստացող

պաշտոնը ստորագրությունը (անունը, ազգանունը)

պաշտոնը ստորագրությունը (անունը, ազգանունը)

24/12/2018 11:19:13

ՈՐՈՇՈՒՄ

հետմահու դատահոգեբանական փորձաքննություն նշանակելու մասին

ք. Երևան 10-ը հոկտեմբերի, 2018թ.

ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի քննչական բաժնի ավագ քննիչ Հ.Գ.Միքայելյանս, վերանայելով թիվ 16105018 քրեական գործի նյութերը,

ՊԱՐԶԵՑԻ

2018թվականի հունիսի 21-ին՝ ժամը 03:33-ին ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի վարչության Մալաթիայի բաժնից հաղորդում է ստացվել այն մասին, որ Կիևյան կամրջի տակ՝ Հալաբյան փողոցից դեպի Հրազդանի կիրճ տանող ճանապարհի սկզբնամասում առկա է տղամարդու դի: Պարզվել է, որ դա եղել է Երևան քաղաքի Ավանեսովի 26շենքի 27բնակարանի բնակիչ, 18.06.1986թվականին ծնված Արմեն Վարդանի Նահապետյանի դին:

Դեպքի առթիվ ՀՀ ՔԿ ԵՔՔՎ Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի քննչական բաժնում 01.07.2018թ. որոշում է կայացվել ՀՀ քրեական օրենսգրքի 110-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով թիվ 16105018 քրեական գործը հարուցելու մասին:

Նկատի ունենալով, որ քրեական գործով անհրաժեշտ է պարզել Արմեն Վարդանի Նահապետյանի ընդհանուր հոգեկան վիճակը՝ թե ինչպիսի հոգեբանական վիճակում է նա գտնվել նախքան ինքնասպանություն կատարելը և այն կատարելու պահին, ինչպես նաև գործի համար նշանակություն ունեցող մի շարք այլ հանգամանքներ պարզելու համար անհրաժեշտ են դատահոգեբանական բնագավառի հատուկ մասնագիտական գիտելիքներ, ուստի ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 55-րդ, 243-րդ, 244-րդ, 246-րդ և 248-րդ հոդվածներով,

ՈՐՈՇԵՑԻ

Թիվ 16105018 քրեական գործով նշանակել հետմահու դատահոգեբանական փորձաքննություն, որի կատարումը հանձնարարել «Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան» հիմնադրամի կիրառական հոգեբանության և հոգեբանության ամբիոններին:

1. Պարզաբանման համար փորձագետներին առաջադրել հետևյալ հարցերը.

1.1 Ինչպիսի՞ անհատական հոգեբանական, անձնային, հուզական և մոտիվացիոն ոլորտի առանձնահատկություններ է ունեցել Արմեն Նահապետյանը,

1.2 Ի՞նչ հոգեկան վիճակում է գտնվել Արմեն Նահապետյանը ինքնասպանությանը նախորդող ժամանակահատվածում, ի՞նչ հուզական վիճակում, որն էականորեն ազդել է նրա գիտակցության և վարքի վրա,

1.3 Առաջացե՞լ է արդյոք Արմեն Նահապետյանի մոտ ինքնասպանությանը նախորդող ժամանակահատվածում հուզական վիճակ՝ կապված նրա շրջապատող անձանցից որևէ մեկի պահվածքի հետ,

2. Փորձագետներին տրամադրել սույն որոշման օրինակը:

3. Հանձնարարել «Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան»-ի ռեկտորին՝ պարզաբանել փորձագետ/ներ/ին, ում հանձնարարվելու է փորձաքննության կատարումը, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 85-րդ հոդվածով նախատեսված՝ փորձագետի իրավունքներն ու պարտականությունները և նախազգուշացնել ՀՀ քրեական օրենսգրքի 338 հոդվածով նախատեսված՝ փորձագետի կողմից ակնհայտ կեղծ եզրակացություն տալու համար սահմանված քրեական պատասխանատվության մասին:

Ծանոթություն: Փորձաքննության կատարման համար անհրաժեշտ քրեական գործի նյութերը գտնվում են ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի քննչական բաժնում և փորձաքննությունը սկսվելուն պես կտրամադրվեն փորձագետներին:

Ավագ քննիչ [signature] Հ.Գ.Միքայելյան